ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEE7-2860-4522-A14C հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/0267/02/26 ք. Երևան
2 Փետրվարի 2026թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Արման Օհանյանը ուսումնասիրելով <<Պրոյեկտ Ինտեր-Ինվեստ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության **(այսուհետ նաև՝ Հայցվոր կամ <<Պրոյեկտ Ինտեր-Ինվեստ>> ՍՊԸ)** ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնք հիմնարկի **(այսուհետ նաև՝ Պատասխանող)**, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության **(այսուհետ նաև՝ Երրորդ անձ)**՝ Պայմանագրի ապահովման վերաբերյալ 12.07.2023թ. <<Պրոյեկտ Ինտեր-Ինվեստ>> ՍՊԸ-ի կողմից միակողմանիորեն տրված <<Տուժանքի մասին համաձայնագիրն>> ու նույն օրը՝ 12.07.2023թ. որակավորման ապահովման վերաբերյալ տրված <<Տուժանքի մասին համաձայնագիրը>> որպես Ապարանի համայնքապետարանի ու <<Պրոյեկտ ինտեր-ինվեստ>> ՍՊԸ-ի միջև 07.06.2023թ. կնքված Ապարան համայնքի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀ-ԱՄ-ԱՀ-

ՀԲՄԱԾՁԲ-36/23 պայմանագրի 1-ին փուլային աշխատանքների կատարման ապահովման նպատակով տրված Պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում դիտելու, Ապարանի համայնքապետարանի ու <<Պրոյեկտ ինտեր-ինվեստ>> ՍՊԸ-ի միջև 07.06.2023թ. կնքված Ապարան համայնքի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-36/23 պայմանագիրը 04.03.2025թ. դրությամբ լուծված համարելու, որպես կողմերի միջև 07.06.2023թ. կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-36/23 պայմանագիրը լուծված համարելու հետևանք՝ Պայմանագիրը լուծված համարվելու պահից Պայմանագրի հետ կապված հետագա յուրաքանչյուր գործողություն ոչ իրավաչափ համարելու և իրավասու մարմնի ցանկացած որոշում անվավեր ճանաչելու, այն է՝ որպես կողմերի միջև 07.06.2023թ. կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-36/23 պայմանագիրը լուծված համարելու հետևանք՝ <<Պրոյեկտ Ինտեր- Ինվեստ>> ՍՊԸ-ի կողմից 12.07.2023թ.-ին թիվ 32.2-08/264 բանկային երաշխիքով տրված 10.586.700 ՀՀ դրամի չափով գումարի գանձումը Ապարանի համայնքապետարանի կողմից ոչ իրավաչափ համարելու, որպես կողմերի միջև 07.06.2023թ. կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-36/23 պայմանագիրը լուծված համարելու հետևանք՝ Ապարան համայնքի ղեկավարի ժ/պ Ա.Գ.Կարապետյանի 11.03.2025թ. թիվ 173 որոշումը՝ Ապարանի համայնքապետարանի ու <<Պրոյեկտ ինտեր-ինվեստ>> ՍՊԸ-ի միջև 07.06.2023թ. կնքված Ապարան համայնքի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-36/23 պայմանագիրը՝ չկատարված 240.600.360 ՀՀ դրամի մասով միակողմանիորեն լուծելու մասին անվավեր ճանաչելու, որպես կողմերի միջև 07.06.2023թ. կնքված պայմանագիրը լուծված համարելու հետևանք՝ Ապարան համայնքի ղեկավարի ժ/պ Ա.Գ.Կարապետյանի 24.03.2025թ. թիվ 211-Ա որոշումը՝ <<Պրոյեկտ ինտեր-ինվեստ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, անվավեր ճանաչելու, Ապարանի համայնքապետարանից հօգուտ <<Պրոյեկտ ինտեր-ինվեստ>> ՍՊԸ-ի, որպես անհիմն հարստացման գումար, 10.586.700 /տասը միլիոն հինգ հարյուր ութսունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ բռնագանձելու պահանջների մասին հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

II

(ԵԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)

1. <u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

13.01.2026 թվականին՝ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վարվող էլեկտրոնային համակարգի **(այսուհետ նաև՝ Համակարգ)** միջոցով, <<Պրոյեկտ Ինտեր-Ինվեստ>> ՍՊԸ-ն

հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնք հիմնարկի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ Պայմանագրի ապահովման վերաբերյալ 12.07.2023թ. <<Պրոյեկտ Ինտեր-Ինվեստ>> ՍՊԸ-ի կողմից միակողմանիորեն տրված <<Տուժանքի մասին համաձայնագիրն>> ու նույն օրը՝ 12.07.2023թ. որակավորման ապահովման վերաբերյալ տրված <<Տուժանքի մասին համաձայնագիրը>> որպես Ապարանի համայնքապետարանի ու <<Պրոյեկտ ինտեր-ինվեստ>> ՍՊԸ-ի միջև 07.06.2023թ. կնքված Ապարան համայնքի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-36/23 պայմանագրի 1-ին փուլային աշխատանքների կատարման ապահովման նպատակով տրված Պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում դիտելու, Ապարանի համայնքապետարանի ու <<Պրոյեկտ ինտեր-ինվեստ>> ՍՊԸ-ի միջև 07.06.2023թ. կնքված Ապարան համայնքի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-36/23 պայմանագիրը 04.03.2025թ. դրությամբ լուծված համարելու, որպես կողմերի միջև 07.06.2023թ. կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-36/23 պայմանագիրը լուծված համարելու հետևանք՝ Պայմանագիրը լուծված համարվելու պահից Պայմանագրի հետ կապված հետագա յուրաքանչյուր գործողություն ոչ իրավաչափ համարելու և իրավասու մարմնի ցանկացած որոշում անվավեր ճանաչելու, այն է՝ որպես կողմերի միջև 07.06.2023թ. կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-36/23 պայմանագիրը լուծված համարելու հետևանք՝ <<Պրոյեկտ Ինտեր- Ինվեստ>> ՍՊԸ-ի կողմից 12.07.2023թ.-ին թիվ 32.2-08/264 բանկային երաշխիքով տրված 10.586.700 ՀՀ դրամի չափով գումարի գանձումը Ապարանի համայնքապետարանի կողմից ոչ իրավաչափ համարելու, որպես կողմերի միջև 07.06.2023թ. կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-36/23 պայմանագիրը լուծված համարելու հետևանք՝ Ապարան համայնքի ղեկավարի ժ/պ Ա.Գ.Կարապետյանի 11.03.2025թ. թիվ 173 որոշումը՝ Ապարանի համայնքապետարանի ու <<Պրոյեկտ ինտեր-ինվեստ>> ՍՊԸ-ի միջև 07.06.2023թ. կնքված Ապարան համայնքի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱԾՁԲ-36/23 պայմանագիրը՝ չկատարված 240.600.360 ՀՀ դրամի մասով միակողմանիորեն լուծելու մասին անվավեր ճանաչելու, որպես կողմերի միջև 07.06.2023թ. կնքված պայմանագիրը լուծված համարելու հետևանք՝ Ապարան համայնքի ղեկավարի ժ/պ Ա.Գ.Կարապետյանի 24.03.2025թ. թիվ 211-Ա որոշումը՝ <<Պրոյեկտ ինտեր-ինվեստ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, անվավեր ճանաչելու, Ապարանի համայնքապետարանից հօգուտ <<Պրոյեկտ ինտեր-ինվեստ>> ՍՊԸ-ի, որպես անհիմն հարստացման գումար, 10.586.700 /տասը միլիոն հինգ հարյուր ութսունվեց հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ բռնագանձելու պահանջների մասին:

14.01.2026 թվականին հա. ԵԴ2/0267/02/26 քաղաքացիական գործը Համակարգի միջոցով մակագրվել է դատավոր Ա.Օհանյանին:

15.01.2026 թվականին հա. ԵԴ2/0267/02/26 քաղաքացիական գործը

Համակարգի միջոցով հասանելի է դարձել Դատարանի դատավոր Ա.Օհանյանին:

20.01.2026 թվականին Դատարանը <<Հայցադիմումը վերադարձնելու մասին>> որոշում է կայացրել:

23.01.2026 թվականի Հայցվորի կողմից հայցադիմումը կրկին ներկայացվել է Դատարան:

23.01.2026 թվականին ժամը 21:30-ին հա. ԵԴ2/0267/02/26 քաղաքացիական գործը Համակարգի միջոցով մակագրվել է դատավոր Ա.Օհանյանին:

26.01.2026 թվականին հա. ԵԴ2/0267/02/26 քաղաքացիական գործը Համակարգի միջոցով հասանելի է դարձել Դատարանի դատավոր Ա.Օհանյանին:

III
(ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ)

Դատարանը, քննության առնելով ներկայացված հայցադիմումը, գտնում է, որ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր առկա չեն, հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների ու 27.2-րդ գլխով նախատեսված հոդվածների պահանջներին, ուստի ենթակա է վարույթ ընդունման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ *հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 10-12-րդ և 14-րդ կետերով սահմանված դեպքերի: Եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը: Կրկին ներկայացված հայցադիմումում նույն խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ խախտումները վերացնելու հնարավորությունից հայցվորը զրկված էր իր կամքից անկախ պատճառներով:*

Հիմք ընդունելով վերոգրյալը, սույն քաղաքացիական գործով հայցադիմումը պետք է առաջին ատյանի դատարան ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 13.01.2026 թվականին:

Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով սահմանված

հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է Պատասխանողից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, որոնք վերջինս պետք է Դատարան ներկայացնի որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝ *դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ* ***իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:***

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:*

Դատարանն արձանագրում է, որ ելնելով ներկայացված վեճի և հայցապահանջի բովանդակությունից, առկա է կողմերի հետ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի քննության անհրաժեշտություն, որպիսի պարագայում առկա է առնվազն մեկ դատական նիստ անցկացնելու անհրաժեշտություն:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 234.5 և 234.6, 234.9, 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. **Հայցադիմումն ընդունել վարույթ**:

2. ***Պատասխանող ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնք հիմնարկից պահանջել ՀՀ-ԱՄ-ԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-36/23 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնք հիմնարկի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները***:

3. **Պարզաբանել կողմերին, որ՝**

- **ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում**, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.

- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

- **հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում**:

- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Գործի քննությունն իրականացնել դատական նիստով, որը տեղի կունենա 25.02.2026 թվականին՝ ժամը 15:10-ին ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Էրեբունու նստավայրի (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մ.Խորենացի 162Ա) դատական նիստերի թիվ 7 դահլիճում:

5. Հայցադիմումը առաջին ատյանի դատարան ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 13.01.2026 թվականին:

6. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արման Օհանյան

Digitally signed by OHANYAN ARMAN 4014820192
Date: 2026.02.02 11:48:46 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am